ընկերութեան միջնորդութեամբ պաշտօն են ձեռք բերել։ Ամուսնացածներից շատերի ընտանիքը խնամուել է ընկերութեան հաշուով նոցա բանդարկուելեան ժամանակ։ Մի տարուայ ընթացքում ընկերութիւնը 6243 մարկ ծախս է ունեցել և 7585 մարկ եկամուտ. ընկերութեան կարողութիւնը հասնում է 61482 մարկի։ Չպէտք է մոռանալ, որ այս ընկերութիւնը մի գաւառի համար է. բայց այդ գաւառում ո՞վ գիտէ ուրիշ քանի՞ տեսակ քրիստոնէական բարեգործական հաստատութիւններ կան։

Մեծի Կալվինիստական եկեղեցու Կոնսիստորիայի յայտարարութեամբ բողոքականների թիւը 1883 թ. իւր շրջանում 10·900 էր հասնում, իսկ այժմ 24·829 հոգի։ Քսան տարուայ ընթացքում նոյն շրջանում կառուցուել են 20 նոր եկեղեցի, իսկ ութը նոր են սկսել կառուցանել։ Մեծի Նահանգը կաթոլիկ երկիր է, բողոքական համայնքների և եկեղեցիների այդպիսի գոյի աճումը, բողոքական պաստօրների յաջող գործունէութեան արդիւնք պէտք է համարել։

— Անցեալ համարում հրատարակեցինք Հ. Կարապետի մի յօդուածը Հինաստանի առաքելութեան մասին եղած տարբեր կարծիքների մասին։ Բնականաբար հեթանոսների մէջ քրիստոնէութիւն տարածող շրջաններում մարքերի յուզում պիտի յառաջ գար շատ անգամ անտեղի յարձակումների համար։ Նորերս Հեսսենում միսիոնարների առաքելութեամբ բազմամարդ ժողով էր գումարուած, ուր պաստոր Կրանցը, որ երկար տարիներ միսիոնարութիւն է արել Ճանխայում, մի բանախօսութիւն արաւ «Գերմանիայի միսիոնարական պարտքը Հինաստանում» վերնագրով։ Բանախօսութեան ազդեցութեամբ բոլոր ժողովականները հետևեալ ճշդոը Հաստատեցին։ «Աւետարանական Ե. միսիոնարական ընդհանուր ժողովը գոյրոյթով իւր բողոքն է յայտնում այն անարդար և ոչ ապացուցուած մեղադրանքների համար, որ շատ լրագիրներ չինական չիոճութիւնների պատճառով բարկեցին միսիոնարների վերայ։ Ժողովականները յատկապէս բողոքում են Հինաստանում եղած գերմանական նախկին գեսպանի դէմ։ Ժողովականները յոյս ունին, որ բողոքական քրիստոնեաները չեն մոլորուի անհիմն կասկածներով և կշարունակեն աջակցել աւետարանի քարոզութեան գործում, որով յոյս ունին Հինաստանցիների Ներքին վերածնութեան գործին նպաստել։

— Հեսսենում միևնոյն ժամանակ գումարուել է Արևելքում գործող քրիստոնէական օգնող գաշնակցութեան Ե. ընդհանուր ժողովը (Hilfsbund für christliches Liebeswerk im Orient), ուր որոշուած է շարունակել թագուհի Թերեզիի հրատարակութիւնը ժողովրդի մէջ գէպի այս գործը սէր զարթեցնելու նպատակով։ Երկրորդ մի հայ ուսուցիչ եւ քարոզիչ պահել Մարաշի շրջակայքում 500 մարկ ռոճկակ նշանակելով։ Երրորդ 200 մ. նպաստ նշանակել նոյն գործի համար նշանակուած գերմանացի պաշտօնեաների կաղդուրուելու նպատակով դարձեալ Մարաշի շրջակայքում։

Մեր ընթերցողներին յայտնի պէտք է լինի, որ այս ընկերութիւնը կազմուած է յատկապէս հայոց օգնելու նպատակով։ Ծարաւագդարար վերջին տարիներս քրիստոնէական օգնութեան գաղափարի հետ կարծես միացել է և միսիոնարութեան խնդիրը։ Մենք կասկածով ենք յայտնում այս միտքը, որովհետև գործի գլուխ կանգնած շատ պաստօրներից յաճախ ապահովութիւն ենք ստացել, թէ իրենց նպատակը եզբայրական օգնութիւնից այն կողմը չէ անցնում։ Հայաստանեայց եկեղեցու սպասաւորների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս ընկերութեան գործունէութեան վերայ և մանրամասն տեղեկութիւններ հայցում իրենց դիտողութիւնների մասին, որպէս զի մենք էլ մեր կարողութեան չափ գործի ուղիղ ընթացքին հետևել կարողանանք։

ԱՐԵԳԱԿՆԱՓԱՅԼ

ՄՈՒԶԱՖՓԷՐ—ԷԴ-ԴԻՆ ՇԱՀԻ ԳԱԼՈՒՍՏՆ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌ։

Նորին Մեծութիւն Արեգակնափայլ Մուզաֆֆէր-Էդ-դին Շահը Ելրոպա ուղեւորուելիս՝ Երեւանում Ս. Հոգեւոր Տիրոջ տեսակցութեան ժամանակ՝ խոստացել էր վերադարձին այցելել Հայաստանեայց Մայր Աթոռը։ Մեր Օգոստափառ Կայսեր կողմից Շահին ուղեկից նշանակուած Գեներալ ադիւտանտ Արանեւից հոկտ. 9-ին Մայր Աթոռում ստացուած հեռագրին աւետաց Ելենովկա կայարանից, թէ Նորին Արքայական Մեծութիւնը Մայր Աթոռում կլինի հոկտեմբ. 11-ին։ Իրանի Շահն-շահի այցելութեան լուրը մեծ ուրախութիւն պատճառեց ամբողջ միաբանութեան մանաւանդ այն պատճառով, որ առաջ լուրեր էին պտըտում, թէ Նորին

Արքայական Մեծութիւնը ժամանակի սղութեան պատճառով անկարող կլինի այցելել Ս. Էջմիածինը։ Ն. Ս. Օծութեան հրամանով Արքայի ընդունելութեան համար նշանակուած յանձնաժողովը մեծ եռանդով սկսեց իւր զբաղմունքը։ Արքայի անցնելիք ճանապարհը զարդարուած էր կանաչով, ծաղիկներով եւ դրօշակներով։ Առանձնապէս շքեղ զարդարուած էին վանքի մեծ դարբասի եւ Տըղամատյ դրան ճակատները, Վիհարանի շինութիւնն ու աստիճանները, Մատենադարանը, Տպարանը եւ ճեմարանը։ Ս. Հայրապետի կողմից Երեւան գնացին Սինօդի Դերապատիւ Նախանդամ Արիստակէս Արքեպիսկոպոս, եւ

Արժ. Տ. Համազասպ վարդապետ, որ Դերապատիւ Սուրբ Աթոռ Արքեպիսկոպոսի հետ Նորին Մեծութեան պէտք է ներկայանային եւ Էջմիածին հրաւիրէին։ Ն. Ս. Օծութեան կողմից ուղարկուած էր իւր սեպհական փակ կառքը Արքայի համար, իսկ մի ուրիշ փակ կառք Սաղ-

բազամի եւ միւս բարձրաստիճան հետեւորդների համար։ Հոկտ. 11-ին կէսօրից յետոյ ժամը 2½-ին Արքայի մուտքն էր նշանակուած։ Մի ժամ առաջ Մայր Աթոռի միաբաններից Արժ. Տեարք Ադամ եւ Մամբրէ վարդապետները երկու զեղեցիկ զարդարուած

ձիերով՝ այսինքն երեքնուկ եւ կանաչազգեստ շաքիրներով վանքի կալուածների սահմանն էին ուղարկուած Արեգակնափայլ Տահին ընդառաջելու։ Միաբանութիւնն զգեստաւորուած՝ գլուխ ունենալով Տէարք Սուքիաս եւ Արիստակէս Արքեպիսկոպոսները, ճեմարանի աշակերտութիւնն ուսուցչական խմբով, ինչպէս եւ գիւղի տղայոց եւ աղջկանց դպրոցների սաներն իրենց ուսուցիչներով՝ շարէ ի շար կանգնած էին վանքի դրսի մեծ դարպասի եւ Տրդատայ դրան մէջ։ Ուղիղ ժամը 2½-ին երեւցաւ Նորին Արքայական Մեծութեան կառքը։ Կառքից իջնելիս միաբանութեան կողմից արծաթի սկուտղի մէջ աղ եւ հաց մատոյց Գերապատիւ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսը։ Նորին Մեծութիւնը վաղարշապատի եւ շրջակայ թուրք հասարակութիւնների մատուցած աղն ու հացն ընդունելուց յետոյ՝ մուտ ամնոխ տակ։ Դպիրների դասը շարժուեցաւ «Թագաւոր փառաց» շարականով։ Նորին Մեծութիւնը խորին լռութեամբ եւ արքայական վեհութեամբ հետեւում էր թափորին երկու կողմից շրջապատուած լինելով միաբանական դասով, իսկ յետեւից իր հետեւորդներով։ Տահի առաջից երկու սարկաւագ ձեռքներին բռնած ունէին արծաթէ խնկամաններ, «բուխարան»», որոնց մէջ կնդրուկ էր ծխում։ Զանգակատան առաջ Արեգակնափայլ Տահին ընդ առաջ եկաւ Ս. Հայրապետը իւր հետ ունենալով գաւազանակիր Տ. Կորիւն եւ Յաւգիկ վարդապետներին։ Վերջինս թարգմանի պաշտօն պիտի կատարէր։ Թափորը կանգ առաւ, լուաց շարականը եւ զանգակների ղողանջիւնը. կանգ առաւ եւ Նորին Արքայական Մեծութիւնը։ Երկու Պետերը ողջունեցին իրար նախ լռելեայն. ապա Ն. Ս. Օծութիւնը մի փոքրիկ ճառով ողջունեց Իրանի Պետի շնորհաբեր գալուստը։ Հոգեւոր Տէրը նախ իւր ուրախութիւնն էր յայտնում Նորին Մեծութեան շնորհաբեր այցելութեան համար, յիշեցնելով՝ որ նոյն տեսակ բաղդի արժանացել է Մայր Աթոռի միաբանութիւնը երջանկայիշատակ Դէորգ եւ Մակար կաթուղիկոսների ժամանակ։ Այս հիմնաւորից Աթոռը հաստատուած է 1600 տարի առաջ պարթեւական տան մի շառաւիղի ձեռքով, որին Առաքեալ Լուսաւորիչ եւ Առաքեալական Աթոռ քարոզիչ էր ուղարկել Հայոց համար։ Սոյն Տաճարի մէջ միաբանական ուխտիս աղօթում ենք Աստծուն, որ երկար ժամանակ Իրանի Թագաւորութեան աթոռի վերայ հաստատուն պահէ Ձերդ Արքայական Մեծութեան եւ յաջողէ Ձեր բոլոր բարի մտադրութիւնները Իրանի բարգաւաճման եւ յառաջադիմութեան համար, ուր բոլոր հպատակների հետ եւ Հայ ազգը հաւատարմագէտ իրաւունք եւ արտօնութիւն է վայելում։

Նորին Ս. Օծութեան ճառին շատ սիրալիր կերպով պատասխանեց Արեգակնափայլ Տահը՝ ուրախութիւն յայտնելով, որ կարողացաւ կատարել իւր խոստումը եւ այցելել Հայոց հինաւուրց հռչակաւոր հաստատութիւնը։ Ապա Տահը արտագին շնորհակալութիւն յայտնեց Վեհին փառաւոր եւ սիրալիր ընդունելութեան համար, յայտնելով միանգամայն, թէ Իւր հպատակ հայերին միւսներից չէ զանազանում, այլ իւր արքայական խնամքն է տարածում միւս հպատակների հետ եւ Հայոց վերայ։

Ապա Հոգեւոր Տէրը միաբանական դասի հետ Նորին Մեծութեան տաճար առաջնորդեց։ Նորին Մեծութիւնը՝ զանազան հարցեր էր առաջարկում եւ տեղեկութիւններ առնում Մայր տաճարի հիմնութեան եւ այլ հանգամանքների վերայ։ Ն. Մեծութիւնը եւ նորա հետեւորդ բարձրաստիճան հիւրերը առանձին ուշադրութիւն դարձրին Տաճարի մեծ կաթուղիկէի ներսից Տահ-Աբաս մեծի օրերից կախուած Տահի վերայ։ Այդ Տահը մշտավառ պէտք է մնար յարեւշտութիւն արքայական տան, որի համար որպէս լուսաւորիչ Տահ Աբաս մեծը Մայր Աթոռին է նուիրել Մաստարա գիւղը, որ մինչեւ այժմ էլ վանական արդիւնաւէտ կալուածքներից մէկն է։ Ապա մի առ մի ի ցոյց տրուեցան թանգագին զգեստներ, մետաքսեայ եւ ոսկեթել ասեղնագործ շուքջառներ եւ առհասարակ եկեղեցական հնութիւններ։ Տաճարի ներսը ուշադրութեամբ զննելուց յետոյ, որ լուսաբարձրեալ Արժ. Տ. Դաւոնդ վարդապետը ճաշակով զարդարել էր տուել, Ն. Մեծութիւնը Հոգեւոր Տիրոջ կողմից եկեղեցական

թանգարանն առաջնորդուեցաւ։ Այստեղ եւս նոյնքան հետաքրքրութեամբ Ն. Մեծութիւնը դիտեց հնութիւնները։ Երբ Արեգակնափայլ Շահը եկեղեցուց դուրս պիտի գար, միաբանական դասը դարձեալ կարգաւորուեցաւ եւ թափորը դէպի վեհարան շարժուեցաւ։ Հազիւ արքան Հոգեւոր Տիրոջ հետ հեռացել էր մի քանի քայլ եկեղեցուց, որ հնչեց Ս. Կոմիտաս վարդ.-ի ձայնագրած Շահին նուիրած քառաձայն երգը։ Գեղեցիկ ներդաշնակութիւնը եւ «Էյ Շահ» բառերի կրկնութիւնը զրաւեց Նորին Մեծութեան ուշադրութիւնը, որի վերայ մատնացոյց արաւ եւ Ն. վեհմութիւն Սաղրազասը։ Ապա Հոգեւոր Տէրը իւր արքայական Հիւրին «ծաղկեայ դահլիճն» առաջնորդեց, որ Մեծ Հիւրին պատշաճ վայելչութեամբ զարդարուած էր։ Իսկ միւս հիւրերը յանձնաժողովի անդամների կողմից առաջնորդուեցան իրենց յատկացրած սենեակները։

Հիւրերի համար նախաճաշիկի ճոխ սեղան էր պատրաստուած, թէեւ առաջուց յայտնուած էր, որ Ն. Մեծութիւնը միայն թէյ պիտի վայելէ Հոգեւոր Տիրոջ մօտ։ Կէս ժամ յետոյ՝ երբ բարձրաստիճան հիւրերը փոքր ինչ հանգստացել եւ թէյ էին վայելել՝ Ն. վեհմութիւն Էմին-էս-Սալթանա Սաղրազամ Միրզա Ալի Ասկեար խանը զեներալ ատիւտանտ Դ. Ս. Արսենիեվի հետ այցելութիւն արին Հոգեւոր Տիրոջ։ Ն. Ս. Օծութիւնը փոխ այցելութիւն տուաւ սինօդականների ուղեկցութեամբ նախ Սաղրազամին եւ ապա զեներալ Արսենիեվին։ Վերջին երկուսը միասին ապա Հոգեւոր Տիրոջ՝ սինօդականների հետ՝ Ն. Մեծութեան մօտ առաջնորդեցին։ Այս տեսակցութեան ժամանակ Ն. արքայական Մեծութիւնը Հոգեւոր Տիրոջ առիւծի եւ արեգակի առաջին կարգի աղամանդեայ շքանշանը տուեց հետեւեալ խօսքերով. «Ուրախ եմ Ձեզ այցելելուս համար, Վեհափառ Տէր, եւ ի սրտէ շնորհակալ Ձեր սիրալիր ընդունելութեան համար. ի նշան Մեր բարեկամական զգացմանց՝ յանձնում ենք Ձեզ այս յիշատակը. յիշեցէք Մեզ Ձեր աղօթքների մէջ»։ Հոգեւոր Տէրը ընդունելով շքանշանը շնորհակալութիւն յայտնեց արքայի ուշադրութեան համար եւ յայտնեց, թէ քրիստոնէական կրօնը պարտաւորեցնում է Մեզ աղօթել թագաւորների համար։ Մի քանի րոպէ անցնելուց յետոյ՝ Շահնշահը Հոգեւոր Տիրոջ ուղեկցութեամբ ցած իջաւ վեհարանից. միաբանութիւնը դարձեալ երկկարգ ընթանում էր մեծ Հիւրի առաջից։ Գեղեցիկ քանդակներով զարդարուած զանգակատան առաջ մի քանի րոպէ կանգ առաւ Ն. Մեծութիւնը եւ հարցեր առաջարկեց նորա շինութեան եւ ծագման մասին։ Այս անգամ թարգմանի պաշտօն կատարում էր պ. Վ. Մատաթեան։ Միաբանական դասը Տաճարի հիւսիսային կողմից դէպի ճեմարան էր ընթանում. ճանապարհի աջ կողմն է գտնւում տպարանի շինութիւնը, որ շատ վայելուչ կերպով զարդարուած էր բազմազոյն թղթէ շղարշաւոր դրօշակներով, ծաղիկներով եւ կանաչներով։ Վանքից ճեմարան տանող ճանապարհը ծածկուած էր կանաչով եւ ծաղիկներով, իսկ դարբասի գլուխը պարսից զինանշանով, դրօշակներով, գորգերով, կանաչով եւ ծաղիկներով։ Գեղեցիկ զարդարանքները եւ հետզհետէ նկատուող կենդանութիւնը զրաւեցին Շահնշահի ուշադրութիւնը, եւ երբ իմացաւ, որ դէպի ճեմարան է առաջնորդում, հաճեց մեծ վեզիրի միջնորդութեամբ յայտնել Ս. Հոգեւոր Տիրոջ, թէ [illegible] ճեմարանի օգտին։ Դարբասի մօտ Արքան կրկին անգամ շնորհակալութիւն յայտնեց Ն. Ս. Օծութեան եւ խնդրեց յետ դառնալ Վեհարան։ Ճեմարանի բակում դարբասից սկսած երկկարգ կանգնած էին աշակերտները, ուսուցչական խումբը՝ Արժ. Տեսուչ Կարապետ վարդապետի հետ։ Երբ Արքան դարբասից ներս մտաւ, Ս. Տեսուչը մօտեցաւ եւ պատուաւոր տեղեկագիրը ներկայացրեց Ն. Մեծութեան։ Աշակերտների ոգեւորուած կեցցէներով Ն. Մեծութիւնը առաջնորդուեցաւ դէպի հիւսիսային բակը, ուր շքեղ յատկական կամար էր կանգնած թարմ ծաղիկներով, դրօշակներով եւ գորգերով զարդարուած։ Ճեմարանի ներսը, յատկապէս Հանդիսարանը զարդարուած էր մեծ շքեղութեամբ եւ ճաշակով, առանձին գահոյք էր պատրաստուած Արքայի համար,

երգեցիկ խումբը տեղաւորուած էր Հանդիսարանում, որպէս զի Արքայի մնալուն պէս՝ երգէ նորա անուան նուիրած երգը։ Բայց Ն. Մեծութիւնը չաճեց շարունակել իր ճանապարհը յայտնելով՝ թէ վերեւ չի բարձրանայ։ Այստեղից միաբանութիւնը եւ բարձրաստիճան եպիսկոպոսները մեծ հիւրին ճեմարանի հիւսիսային դարբասն առաջնորդեցին, որտեղից կառք նստաւ եւ Երեւան գնաց։

Մուզաֆֆէր-էդ-դին Շահը Հոգեւոր Տիրոջ տուած այցելութեամբ մի անգամ էլ կամեցաւ անձամբ ցոյց տալ, թէ որքան շնորհ ունի ղէպի իւր հպատակ հաւատարիմ Հայ ժողովուրդը, որ մի եւ նոյն ժամանակ մեր Հոգեւոր Գետի հօտի մի մասն է։ Ն. Մեծութեան հնգամեայ թագաւորութեան ժամանակ պարսկահպատակ Հայ ժողովուրդն արդէն բազմիցս առիթ էր ունեցել վայելելու իւր Վեհապետի առանձին խնամքն ու պաշտպանութիւնը, որ այստեղ մի առ մի թուելն աւելորդ ենք համարում։ Այս այցելութիւնը մի բարձր առհաւատչեայ էր, թէ Ն. Բարձրութիւնն իւր հայրական եւ արքայական խնամքը այսուհետեւ եւս պիտի տարածէ միւս հպատակների հետ եւ Հայ ժողովրդի վերայ։ Ուստի եւ բնական էր Հոգեւոր Տիրոջ ի սրտէ ուրախութիւնը եւ միաբանական ուխտի երախտագիտական զգացմունքը Իրանի Մեծ Շահի Մայր Աթոռ ժամանելու առթիւ։

Աստուծոյ կարողութեամբ կեցցէ շատ երկար տարիներ Մուզաֆֆէր-էդ-դին Շահն Իրանի։

Գ. Վ. Յովսէփեան.

ՄԱՅՐ ԱԹՈՌ

Հոկտ. 1ին մեծ շքեղութեամբ տօնուեցաւ Ս. Հայրապետի աթոռակալութեան եօթերորդ տարեդարձը։ Ցօնի պատճառով բազմաթիւ հիւրեր էին եկել Երեւանից Ն. Սրբութեան աջը համբուրելու։ Պատարագից յետոյ խուռն բազմութեան ներկայութեամբ հայրապետական մաղթանք կատարուեց Մայր Տաճարում Իջման սեղանի առաջ։ Մաղթանքից յետոյ բաղդ ունեցան Ն. Սրբութեան աջը համբուրելու միաբանութիւնը, ճեմարանի ուսուցչական խումբը աշակերտների հետ եւ բազմաթիւ անձինք աշխարհական դասից։ Պաշտօնական անձինք բաղդ ունեցան Ս. Հայրապետի աթոռակալութեան տարեդարձը շնորհաւորել վեհարանում։ Ճաշին սեղանատունը լի էր ծայրէ ի ծայր։ Հոգեւոր Տէրը հաճել էր սեղանատուն իջնել։ Ճաշի սկզբում Ծերունի Հայրապետը մի քանի սրտառուչ խօսքեր արտասանեց ակնարկելով իւր ծերութիւնը։ Եղեկէլի օրինակով հասկացրեց, որ Աստծու կամքն է երկարացնել իւր կենաց օրերը։ Ապա օրհնեց բոլոր հանդիսականներին եւ վեհարան առանձնացաւ հանգստանալու։ Բազմութիւնը միաբանութեան հետ ուրախ կանգնած ակնածութեամբ եւ խորին լռութեամբ լսում էր Ս. Հայրապետի իմաստալից եւ սրտաշարժ խօսքերը։ Ս. Հայրապետի հեռանալուց յետոյ միաբանութեանս աւագագոյն անդամ եւ երէնջակու վանահայր Տ. Մեսրոպ Արքեպիսկոպոսը, որ մի քանի շաբաթից ի վեր հիւր է այստեղ, առաջարկեց Ն. Սրբութեան կենացը։ Սեղանակիցները կեցցէներով ընդունեցին Գերապատիւ Հօր առաջարկութիւնը, որին հետեւեց Տ. Կոմիտաս վարդապետի ղեկավարութեամբ «Տէր, կեցո զոս ղՀայս» խմբական, քառաձայն երգը։ Մայր Աթոռի հաստատութեան բաժակ առաջարկեց երեւանի թեմակալի փոխանորդ Տ. Սուքիաս Արքեպիսկոպոսն, որ թեմական դպրանոցի նորահաստատ տեսուչ պ. Տատեանի եւ երկու ուսուցիչների ուղեկցութեամբ եկել էր Մայր Աթոռ Ն. Սրբութեան տարեդարձը շնորհաւորելու։ Գերապատիւ Արքեպիսկոպոսը հակիրճ խօսքերով շեշտեց Մայր Աթոռի համազգային նշանակութիւնը եւ ամբողջ միաբանութիւնն ոտքի կանգնած երգեց «Էջմիածին ի Հօրէ» շարականը։ Ի վերջոյ Սիւնօրի նախանդամ Գերապատիւ Արխիմանդրիտ Արքեպիսկոպոսի հրամանով խօսեց Տ. Գարեգին վարդ. Յովսէփեան՝ մատնանշել